ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը**
   Հրանուշ Հակոբյան
2. **Զբաղեցրած պաշտոնը**
   ՀՀ սփյուռքի նախարար
3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   - Իտալիայի Հանրապետություն ս. թ. սեպտեմբերի 9-10-ը
4. **Հրավիրող կողմը՝**
   - Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ Գերաշնորհ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյան

5. **Գործուղման նպատակը՝**
   - ՀՀ Նախագահի ուղերձի ներկայացում Սուրբ Ղազար եկեղեցում՝ Մխիթարյան Միաբանության 300-ամյակի կապակցությամբ,
   - Մասնակցություն Վենետիկի Սուրբ Մարկոս տաճարում հայածես արարողակարգով ժամերգությանը,
   - Մասնակցություն Սուրբ Ղազար եկեղեցում Գերաշնորհ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանի հանդիսապետությամբ մատուցվող Սուրբ և Անմահ Պատարագին,
   - Մասնակցություն հայ հոգևոր և ժողովրդական երգերի համերգին Սուրբ Ղազար եկեղեցում,
   - Մասնակցություն Մխիթարյան Միաբանության 300-ամյակին նվիրված ցուցահանդեսի բացման արարողությանը,
   - Հանդիպումներ հայկական համայնքի ներկայացուցիչների հետ՝ սերտացնելու համայնքային կառույցների հետ կապերը, տեղայնացնելու Սփյուռքի նախարարության ծրագրերը:

6. **Քննարկման թեմաները՝**
   - ՀՀ սփյուռքի նախարարության, Մխիթարյան Միաբանության և ԳԱԱ-ի հետ միաբանության 300-ամյակին նվիրված ձեռնարկների կազմակերպման, ծրագրի, ժամկետների և մասնակիցների մասին,
   - «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին,
   - ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ սկսված «Դու ի՞նչ ես անում Արցախի համար» շարժման ընդլայնում,
   - Տուրիզմի զարգացմանը նպաստող քայլերի և բիզնեսմենների խմբերի Հայսատան այցելությունների կազմակերպում:

7. **Հանդիպումները, ելույթները, հարցազրույցները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Հանդիպումներ՝

- Մխիթարյան Միաբանության քահանայապետական պատվիրակ Գերաշնորհ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանի հետ,
- Մխիթարյան Միաբանության հոգևոր հայրերի հետ,
- Հանդիպում և քննարկումներ Վատիկանում ՀՀ դեսպանի Ն.Գ. պարոն Միքայել Մինասյանի և Իտալիայում ՀՀ դեսպան Ն.Գ. տիկին Վիկտորիա Բաղդասարյան հետ:

Ելույթներ՝

- Վենետիկի Սուրբ Մարկոս տաճարում՝ Վենետիկի Պատրիարք, Գերաշնորհ Տեր Ֆրանչեսկո Մորալիայի մասնակցությամբ հայածես արարողակարգով անցկացվող ժամերգության ժամանակ,
- Սուրբ Ղազար եկեղեցում ներկայացվել է ՀՀ Նախագահի ուղերձը,
- Մայրավանքի սեղանատանը՝ հանդիսաճաշի ժամանակ,
- Տարբեր վայրերից ժամանած հայերի առջև՝ Մայրավանքի հիմնադրման և պատմության մասին պատմավավերագրական ցուցահանդեսի բացման ժամանակ,

Հարցազրույցներ՝

- Հայաստանի հանրային հեռուստաընկերությանը,

Բարձրացված հարցեր՝

- Հայ ինքնության պահպանման գլխավորիր հենասյուները դիտարկելով լեզուն, մշակույթը, ընտանիքը և եկեղեցին՝ երիտասարդների շրջանում լուրջ աշխատանքներ տանել ինքնության հիմնախնդիրների ամրապնդման ուղղությամբ,
- Շարունակել և ընդլայնել մասնագիտական ընկերակցությունների գործունությունը,
- Շարունակել պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման դատապարտման և հետևանքների վերացման ուղղությամբ,
- Աշխատանքներ տանել իտալացի և հայ գործարարների կողմից ներդրումների իրականացում Հայաստանի Հանրապետությունում,
- Հասնել այն բանի, որ յուրաքանչյուր հայ այցելի Հայաստան, ճանաչի իր Հայրենիքը, նպաստել տուրիզմի զարգացմանը, թափ հաղորդել «3 տարին մեկ անգամ հանգստանալ Հայաստանում» շարժմանը,
- Մասնակցել ՀՀ սփյուռքի նախարարության ծրագրերին,
- Լուրջ ուշադրություն դարձնել հայոց լեզվի ուսուցման հարցերին, «Տանը խոսենք հայերեն» շարժումը դարձնել յուրաքանչյուր կառույցի խնդիրը,
- Զբաղվել համայնքից հեռացած հայերին համայնքային կառույցների աշխատանքներում ներգրավելու հարցով:

Սեպտեմբեր 9, 2017թ.

Նախարարը ժամանեց Վենետիկ:

Սեպտեմբերի 9, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը այցելել է «Մուրատ Ռաֆայելյան» վարժարան, որտեղ տեղի է ունեցել, «Գիրք Հայրենիք» ֆիլմի առաջին ցուցադրությունը իտալերեն լեզվով: Նախարար Հ.

Հակոբյանը հանդես է եկել ելույթով, որում բարձր է գնահատել 2016թ. Հռոմի Պապ Ֆրանցիսկոսի պատմական այցը Հայաստան, ինչպես նաև Հայ-Իտալական բազմադարյա բարեկամությունը:

- Այնուհետև նախարար Հ. Հակոբյանը այցելել է Վենետիկի Սուրբ Մարկոս տաճար, որտեղ Վենետիկի Պատրիարք, Գերաշնորհ Տեր Ֆրանչեսկո Մորալիայի մասնակցությամբ անցկացվել է ժամերգություն հայածես արարողակարգով:

Սեպտեմբերի 10, 2017թ.

- ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը մասնակցել է Սուրբ Ղազար եկեղեցում՝ Գերաշնորհ Տեր Լևոն արքեպիսկոպոս Զեքիյանի հանդիսապետությամբ մատուցվող Սուրբ և Անմահ Պատարագին:
- Այնուհետև նախարարը Հ. Հակոբյանը մայրավանքի սեղանատանը մասնակցել է հանդիսաճաշին, որի ընթացքում ներկայացրել է Մխիթարյան Միաբանության՝ Վենետիկի Սուրբ Ղազար կղզում հաստատվելու 300-ամյակի կապակցությամբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ուղերձը:
- Ապա նախարարը հանդիպել է համայնքների ներկայացուցիչներին, ներկայացրել է նախարարության գործունեությունը, ծրագրերը, ինչպես նաև հանգամանորեն խոսել է ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում ներդրումներ անելու անհրաժեշտության և բարենպաստ պայմանների մասին: Միջոցառման ընթացքում ընթերցվել են Վենետոյի նահանգապետ Լուկա Զայայի և Վենետիկի քաղաքապետ Լուիջի Բրունարոյի ուղերձները:
- Նույն օրը նախարար Հ. Հակոբյանը մասնակցել է Մայրավանքի հիմնադրման և պատմության մասին պատմավավերագրական ցուցահանդեսի բացման արարողությանը: Իր խոսքում նախարարը բարձր է գնահատել Մխիթար Սեբաստացու և Մխիթարյանների առաքելությունը հայ գիտամշակութային կյանքի զարգացման գործում և մասնավորապես նշել է, որ Մխիթար Սեբաստացու ղեկավարությամբ 1717 թվականի աշնանը հաստատվելով Սուրբ Ղազար կղզում, հայազգի ընդամենը ինը հոգուց բաղկացած վարդապետները, հիմնադրման առաջին իսկ օրվանից հայոց պետականության բացակայության պայմաններում իրենց գլխավոր խնդիրն են համարել հնարավոր բոլոր միջոցներով զարկ տալ հայ հոգևոր,

ազգային մշակույթին՝ ճանաչելի դարձնել Եվրոպան հայությանը և հայությանը՝ Եվրոպային:

Սեպտեմբերի 10, 2017թ.

Երեկոյան նախարարը վերադարձել է Երևան:

8. **Գործուղվողը՝**
   Հրանուշ Հակոբյան

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**
   13. 09. 2017թ.